- **«Ձայն» վերլուծական տեղեկատվական լրատուն**

  նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

- **Լուսաբանել**

  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**

  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծություններ» ծրագրի շրջանակներում:

- **Ծրագիրն իրականացնում է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն»**

  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:

# Ձայն



◆ ՀԱՄԱՐ 15 ◆ ԱՊՐԻԼ, 2006
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# Հարցեր և պատասխաններ

## Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին

2006 թվականին վերջապես կատարվեց առաջին գործնական քայլը նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում քաղաքացիների ներդրած ավանդների վերադարձման բազմաչարչար գործում:

2006 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով սահմանվեց այդ ավանդների տրամադրման առաջնահերթությունները, որը գերազանցապես կրեց սոցիալական բնույթ: Այդ նպատակի համար նախատեսվեց պետական բյուջեի միջոցներից ծախսել 1 միլիարդ դրամ:

Մենք չենք փորձի քննարկել ավանդների վերադարձման սոցիալական արդարության և համարժեքության հարցերը, այլ սոսկ կփորձենք լրացնել բնակչության տեղեկացվածության բացը:

Ստորև ներկայացվում է ավանդների դիմաց փոխհատուցման օրենքով սահմանված կարգը, գործընթացի ժամանակ ծագող հնարավոր հարցերը և գործընթացը կարգավորող իրավական ակտերից բխող պատասխանները:

**Հարց 1.** Ո՞ր իրավական ակտերի հիման վրա է իրականացվելու ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու գործընթացը:

**Պատասխան:** «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման մասին» ՀՀ կառավարության 16.03.2006թ. թիվ 352-Ն որոշմամբ հաստատված կարգի:

**Հարց 2.** Ովքե՞ր և ի՞նչ առաջնահերթությամբ իրավունք ունեն ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու:

**Պատասխան:** Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեն 2005 թվականի հուլիսի 1-ից 2006 թվականի ապրիլի 1-ն անընդմեջ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների կազմում ընդգրկված՝ մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում խորհրդային ռուբլով ավանդ ներդրած, ստորև բերված սոցիալական խմբերում ընդգրկված անձինք՝ ըստ հետևյալ առաջնահերթության.

1. 70 տարին լրացած և դրանից բարձր տարիքի կենսաթոշակառուներ,
2. մինչև 70 տարեկան կենսաթոշակառուներ,
3. միայնակ կենսաթոշակառուներ,
4. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք,
5. 1990-94թթ. ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած կամ դրա հետևանքով հաշմանդամ դարձած անձինք և նրանց ընտանիքների անդամներ, ինչպես նաև զոհվածների ընտանիքների անդամներ,
6. առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամներ,
7. 1990-94թթ. ՀՀ պաշտպանության մարտական գործողություններից տուժած սահմանամերձ բնակավայրերի բնակիչներ,
8. երկրաշարժից տուժած աղետի գոտու բնակիչներ,
9. բազմազավակ ծնողներ, ինչպես նաև այդ ծնողների երեխաներ:

**Հարց 3.** Նույն սոցիալական խումբ ունեցող ավանդատուներից ո՞ր ավանդատուի փոխհատուցման իրավունքն է համարվում առաջնային:

**Պատասխան:** Փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող քաղաքացին ընդգրկվում է «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի երկրորդ մասով սահմանված սոցիալական այն խմբի ցուցակում, որը տվյալ անձի ունեցած սոցիալական խմբերից իր դիրքով ամենաբարձրն է կամ միակը:

Մեկից ավելի սոցիալական խմբերի առկայության պարագայում առաջնահերթությունը տրվում է այն ավանդատուին, որը միաժամանակ պատկանում է ցուցակի խումբը որոշող սոցիալական խմբի հաջորդ ստորադաս խմբին. հետագա առաջնահերթությունները որոշելիս ավանդատուները ներառվում են ցուցակում՝ ըստ հաջորդող սոցիալական խմբերից ամենաբարձր խմբին պատկանելության:

Նույն սոցիալական խմբի ներսում վճարման ժամանակացույցը որոշելիս վճարման ավելի վաղ ժամկետում ընդգրկվում են երկու և ավելի սոցիալական խումբ ունեցող ավանդատուները:

Օրինակ՝

1. 70 տարին լրացած և դրանից բարձր տարիքի և միաժամանակ միայնակ կենսաթոշակառու անձինք իրենց փոխհատուցումը կստանան ամենավաղ ժամկետներում:
2. 70 տարին լրացած և դրանից բարձր տարիքի և միաժամանակ Հայրենական մեծ պատերազմի մասնակից անձինք իրենց փոխհատուցումը կստանան 70 տարեկան և ավելի բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառուների փոխհատուցումը ստանալուց հետո:

**Հարց 4.** Ո՞վ, ո՞ր դեպքում և ի՞նչ չափով կարող է ստանալ մահացած ավանդա-




*Շարունակությունը հաջորդ էջում*

*Սկիզբը նախորդ էջում*

տուին հասանելիք փոխհատուցումը:

**Պատասխան:** Եթե ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի կազմում ընդգրկված անձի՝ ավանդատու հանդիսացող ամուսինը մահացած է, և մահացած ամուսնու անունով ներդրված ավանդը ներդրվել է նրանց համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, ապա մահացած ամուսնու ավանդի հիսուն տոկոսի դիմաց կենդանի ամուսնու համար փոխհատուցում ստանալու իրավունքը ճանաչվում է որպես ավանդի նկատմամբ մահացածի հետ ընդհանուր համատեղ սեփականության իրավունք և կենդանի ամուսինն իր մահացած ամուսնու ավանդի 50 %-ի չափով ավանդի դիմաց կստանա փոխհատուցում:

**Հարց 5.** Ո՞ւր պետք է դիմել հաշվառման համար:

**Պատասխան:** Ավանդի փոխհատուցում ստանալու համար սահմանված սոցիալական խմբի ներկայացուցիչ նպաստառու ավանդատուն հաշվառման համար պետք է դիմի իր փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն (Փարոս):

**Հարց 6.** Ի՞նչ կարգով կարող է անձը դիմել գործակալություն և ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել:

**Պատասխան:** Փոխհատուցում ստանալու համար անձինք հաշվառման նպատակով իրենց փաստացի բնակության վայրի գործակալություն անձամբ, կամ նոտարական կամ դրան հավասարեցված կարգով վավերացված լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով ներկայացնում են դիմում և հետևյալ փաստաթղթերը.

1. ավանդատուի անձը հաստատող փաստաթուղթը,
2. ավանդատուի ընտանիքի սոցիալական անձնագիրը,
3. ավանդատուի սոցիալական ապահովության քարտը,
4. ավանդատուի խնայողական գրքույկը, ինչպես նաև դրա լուսապատճենը՝
5. Հայրենական մեծ պատերազմի մասնակցին հավասարեցված անձ լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը և դրա լուսապատճենը,
6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի վկայականը կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համապատասխան ստորաբաժանման կողմից տրամադրված տեղեկանքը և դրանց լուսապատճենները:

**Հարց 7.** Ի՞նչ անել, եթե անձնագրում և ավանդային գրքույկում ազգանունները տարբեր են, իսկ իրականում դիմողը նույն անձն է:

**Պատասխան:** Փոխհատուցման համար ներկայացվող դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացնել նաև ավանդատուի անունը և (կամ) ազգանունը փոխելու մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված փոխման վկայականը, եթե անձնագրում և խնայողական գրքույկում նշված անուն ազգանունները տարբեր են, իսկ ուղղելու դեպքում՝ ուղղման տեղեկանքը, և դրանց լուսապատճենները:

**Հարց 8.** Ի՞նչ անել, եթե ավանդային գրքույկում գրառումներն անընթեռնելի են, ջնջված կամ ուղղված:

**Պատասխան:** Փոխհատուցման համար ներկայացվող դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացնել նաև տեղեկանք «Հայխնայբանկ» ՓԲԸ-ից (ավանդային հաշիվը սպասարկող մասնաճյուղի կառավարչի կողմից ստորագրված և մասնաճյուղի կնիքով կնքված) ավանդատուի բանկային հաշվի քարտում առկա տվյալների մասին, եթե խնայողական գրքույկում ավանդատուի անվան, ազգանվան, նրա հաշվեհամարին, մնացորդի ամսաթվին և գումարին վերաբերող գրառումներն անընթեռնելի կամ ջնջումով են, լրացված են թերի կամ մասիտով,

**Հարց 9.** Ի՞նչ անել, եթե ավանդային գրքույկը նորացված է և դրանում չկան մինչև 1993 թվականի հունիսի 10-ի դրությամբ առկա մնացորդի մասին տվյալներ:

**Պատասխան:** Փոխհատուցման համար ներկայացվող դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացնել նաև տեղեկանք «Հայխնայբանկ» ՓԲԸ-ից (ավանդային հաշիվը սպասարկող մասնաճյուղի կառավարչի կողմից ստորագրված և մասնաճյուղի կնիքով կնքված) ավանդատուի բանկային հաշվի քարտում առկա տվյալների մասին, եթե խնայողական գրքույկը 1993 թվականից հետո նորացված է, և դրանում բացակայում են 1993 թվականի մնացորդին վերաբերվող տվյալները:

**Հարց 10.** Ի՞նչ ժամկետներ են նախատեսված դիմումներն ընդունելու համար:



**Աղյուսակ 1.** Ավանդների վերադարձման սանդղակը

| Ավանդի գումարի չափը (խորհրդային ռուբլով) | Տրամադրվող փոխհատուցման գումարը (ՀՀ դրամով) |
|---|---|
| 1000-ից ոչ ավելի | Ավանդի գումարը x 84 |
| 1001-ից մինչև 3000 (ներառյալ) | 84000 + (ավանդի 1000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 29.4) |
| 3001-ից մինչև 5000 (ներառյալ) | 142800 + (ավանդի 3000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 16.8) |
| 5001-ից մինչև 10000 (ներառյալ) | 176400 + (ավանդի 5000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 8) |
| 10000-ից ավելի | 216400 + (ավանդի 10000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 4) |

**Պատասխան:** Դիմումներն ընդունվում են 2006թ. ապրիլի 12-ից մինչև մայիսի 12-ը՝ մինչև յուրաքանչյուր աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

**Հարց 11.** Ո՞ր դեպքերում կարող է մերժվել քաղաքացու հաշվառումը:

**Պատասխան :** Դիմողի տվյալների հաշվառումը կարող է մերժվել, եթե՝

ա) դիմողը չի հանդիսացել ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ՝ 2005 թվականի հուլիսի 1-ից մինչև 2006 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ առանց ընդհատման,

բ) դիմողը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը,

գ) դիմողը չի հանդիսանում խնայողական գրքույկում նշված ավանդային հաշվետերը, նրա ամուսինը կամ նրա՝ նոտարական կամ դրան հավասարեցված կարգով վավերացված լիազորագրով հանդես եկող ներկայացուցիչը,

դ) դիմողի ներկայացրած խնայողական գրքույկի տերն ընդգրկված չէ դիմողի՝ նպաստառու ընտանիքի կազմում կամ մահացել է: Եթե մահացածը հանդիսանում է դիմողի ամուսինը, ապա դիմումն ընդունվում է,

ե) խնայողական գրքույկը տրված է նախկին ԽՍՀՄ այլ միութենական հանրապետության խնայբանկի կողմից,

զ) դիմողը չի հանդիսանում «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 2-րդ կետում նախատեսված սոցիալական որևէ խմբի ներկայացուցիչ,

է) դիմումը լրացված է թերի կամ ջնջումներով, կամ մասիտով:

**Հարց 12.** Ի՞նչ չափով է իրականացվելու փոխհատուցման տրամադրումը:

**Պատասխան:** Փոխհատուցման տրամադրումն իրականացվելու է ըստ **Աղյուսակ 1**-ում բերված սանդղակի:

**Օրինակ՝** Եթե ձեր ավանդը կազմում է 9500 խորհրդային ռուբլի, ապա դրա դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարը կկազմի (9500-5000*)x8+176400 = 212400 ՀՀ դրամ:

**176400 ՀՀ դրամը 5000 խորհրդային ռուբլի ավանդի դիմաց տրվող փոխհատուցվող գումարն է, որը հաշվարկված է նույն բանաձևով:*

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՏԸ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ն Է:**

ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
(լրատվական գործունեություն իրականացնող) «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178,
տրված՝ 28/06/04

•

**Թողարկման պատասխանատու**
Գագիկ Թորոսյան

•

**Տպաքանակը**
6000 օրինակ:
Տարածվում է անվճար:

•

**Հասցե՝**
ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների 15-13
Հեռ./ֆաքս: (374 10) 540 289,
www.edrc.am
dzayn@edrc.am

Oxfam